***

Ազգիս հանգուցեալ Հայրապետը անցեալ ամի Հոկտեմբեր ամսում բարեհաճեցաւ պարգեւատրել Ալէքսանդրապոլի Յաջորդ բարեշնորհ Յուսիկ վարդապետին ծաղկեայ փիլոնով ի տրբիտուր նորա արթուն եւ արդիւնաւոր ազգային եւ Եկեղեցական ծառայութեանց:

***

Բնիկ Գորեցի և այժմ վերաբնակիչ Օդեսայի Մեծ. Պ. Պօղոս Միքայէլեան Քուզանեան նուիրել է Օդեսայի Հայոց Հոգեւոր Դպրոցին ՌՌՆ հազար բուբլի (10000), որպէս զի այս գումարով նոյն դպրոցի Հոգաբարձութիւնը եկեղեցական տան դատարկ գետնի վերայ կառուցանել տայ երկյարկեայ մի շինութիւն, և սորա տարեկան եկամուտից, որ մերձաւորապէս էջԷՌ հազար բուբլի (2000) կհասանէ, տարեկան ութ հարիւր բուբլի վճարէ պ. Քուզանեանին և մնացեալը՝ ի գործ դնէ յօգուտ յիշեալ Դպրոցի. իսկ Քուզանեանի մահուանից յետոյ ամբողջ եկամուտի երկու մասը յատկացնել յօգուտ յիշեալ Դպրոցին և մի մասը յօգուտ տեղական հայ աղքատների:

Ազգիս հանգուցեալ Վեհափառ Հայրապետը Մեծ. պ. Պօղոս Քուզանեանի այս առատաձեռն ազգային նուիրաբերութիւնը քաղցր հաճութեամբ ընդունելով՝ բարեհաճեց օրհնել և քաջալերել Նորան Իւր Հայրապետական Սրբատառ Կոնդակաւ:

Ամենայն գովեստից և շնորհակալեաց արժանի համարելով Մեծ. պ. Քուզանեանի այս առատաձեռն նուիրաբերութիւնը հրապարակաւ մաղթումենք.—

Կեցցեն այսպիսի բարեպաշտ Ազգայինք, որոնք իւրեանց վաստակից բաժին հանել Եկեղեցւոյն և Ազգին, չեն զլանում, մանաւանդ դեռ իւրեանց կենդանութեան ժամանակ:

***

Ուրախութեամբ սրտի աւետումենք մեր սիրելի ազգայնոց, որ Ս. Սինոդը ամենաքաղցր հաճութեամբ յարգելով Տփխիսու Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան վարչութեան նախ՝ հանգուցեալ Հայրապետին և ապա առ ինքն ուղղեալ խնդիրը, թոյլատրեց Տփխիսու եկեղեցեաց մինի մօտ բանալ իւրեանց ծախքով մի նոր Օրիորդաց դպրոց Տփխեաց վիճակի Հայ ծխական Հոգեւոր դպրոցաց թեմ. Վերատեսչի հսկողութեան ներքոյ:

***

Ագքիրման քաղաքացի եղբարք—Պարոնայք Աբրահամ և Յովհաննէս Աստուածատրեանք իւրեանց հանգուցեալ հօր բերանացի յանձնարարութեան համաձայն յօգուտ ճեմարանի Մայր Աթոռոյս նուիրեցին եօթանասուն բուբլի (70). որոյ համար յայտնումենք հրապարակական խորին շնորհակալութիւն՝ ցանկանալով նոցա կատարեալ յաջողութիւն: